

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ



Անդրադարձ՝ ոլորտի առաջնային խնդիրներին

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի անդամ Ջիմ Կոստային:

Ողջունելով հյուրին՝ նախարարը շնորհակալություն է հայտնել Ջիմ Կոստային՝ հայանպաստ գործունեության համար: Այնուհետև համառոտ ներկայացրել է Հայաստանի գյուղատնտեսության ներկա վիճակը, ոլորտի գերակա ուղղություններն ու ընթացիկ ծրագրերը:

Այս համատեքստում նախարարը ընդգծել է հատկապես՝ ԱՄՆ գյուղտնտեսության (USDA), ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) և ամերիկյան այլ կազմակերպությունների հետ համատեղ ծրագրերի իրականացման կարևորությունը: «Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ համագործակցության հիմքերը դրվել են Հայաստանի անկախացումից ի վեր, այս ընթացքում մեծ աջակցություն է ցուցաբերվել մեր երկրի տնտեսության, այդ թվում նաև՝ գյուղատնտեսության ոլորտի զարգացմանը:

ԱՄՆ կառույցները մեծ օժանդակություն են տրամադրել հատկապես գյուղատնտեսության ոլորտում նորագույն տեխնոլոգիաների ներդրման, վերամշակող ճյուղի զարգացման և այլ ուղղություններով»,- նշել է նախարար Սերգո Կարապետյանը: Միաժամանակ նախարարը տեղեկացրել է, որ ամերիկյան կազմակերպությունների կողմից իրականացվող մի շարք ծրագրեր այսօր ևս ընթացքի մեջ են:

Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել նաև ոլորտի առաջնային խնդիրներին, որոնց թվում նախարարը հատկապես կարևորել է կենդանիների համարակալման ու հաշվառման իրականացման, հակակարկտային պաշտպանիչ ցանցերի, ոռոգման նորագույն համակարգերի, նորաստեղծ գյուղատնտեսական կոոպերատիվներին նորագույն գյուղտնտեսական ավանդույթների անհրաժեշտությունը:

Շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար՝ Ջիմ Կոստան նշել է, որ իր այցի նպատակներից մեկը՝ գյուղատնտեսության ոլորտում համագործակցության հնարավորությունների բնակարանում է: Հետագա աջակցությունն առավել առարկայական դարձնելու նպատակով, պարոն Կոստան առաջարկել է մինչև այցի ավարտը պատրաստել և ներկայացնել համագործակցության հնարավոր ուղղությունների վերաբերյալ առաջարկությունների ցանկ:

Հանդիպման ավարտին նախարար Սերգո Կարապետյանը Ջիմ Կոստային խնդրել է փոխանցել ԱՄՆ գյուղտնտեսության նախարարի տեղակալին՝ Հայաստան այցելելու հրավերը:

Քննարկվել է CARMAC 2 ծրագրի ընթացքը

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է Համաշխարհային բանկի պատվիրակությանը, որի կազմում էին ՀՀ ծրագրերի պատասխանատու, Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության ծրագրի (CARMAC) ղեկավար Արուսյակ Ալավերդյանը, ՀՀ գյուղատնտեսության գծով ավագ տնտեսագետ, CARMAC 2 ծրագրի ղեկավար Բեքզող Շամսիևը և այլ պաշտոնատար անձինք: Հանդիպման նպատակն էր՝ քննարկել CARMAC 1 ծրագրի արդյունքները, ինչպես նաև CARMAC 2 ծրագրի ընթացքը:

Ողջունելով հյուրերին՝ նախարար Սերգո Կարապետյանը վստահություն է հայտնել, որ ՀՀ պատվիրակության հետ համատեղ գործուն աշխատանքը կնպաստի ծրագրերի արդյունավետության ապահովմանը:

«Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության առաջին ծրագրի իրականացումը մեծապես նպաստել է մեր երկրում անասնապահության ոլորտի զարգացմանը: Այդ հաջողություններն ամրապնդելու և ոլորտի կայուն զարգացումն ապահովելու համար հարկավոր է մշտական ուշադրության կենտրոնում պահել նաև ծրագրի երկրորդ փուլով իրականացվող աշխատանքների կատարումը», - նշել է նախարար Սերգո Կարապետյանը:

Իր հերթին Բեքզող Շամսիևը բարձր է գնահատել CARMAC 1 ծրագրի արդյունքները՝ հավելելով, որ այն հիմք է հանդիսացել ծրագրի երկրորդ փուլի բարեհաջող ընթացքի համար:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Արագածոտնի, Արմավիրի և Լոռու մարզերի մի շարք համայնքներում ս.թ. հունիս և հուլիս ամիսներին հորդառատ անձրևի ու կարկտահարության հետևանքով տուժել են բնակիչներ, բնակելի տներ և օժանդակ շինություններ, վնասվել գյուղամիջյան ճանապարհներ, կամուրջներ, հենապատեր: Կառավարությունը 104 մլն դրամ է հատկացրել աղետի հասցրած վնասի հետևանքները վերացնելու, ինչպես նաև հետագայում նման մեծածավալ վնասից խուսափելու համար՝ Արմավիրի մարզում 22 և Արագածոտնի մարզում 6 հակակարկտային կայան տեղադրելու նպատակով: Ուժեղ քամու պատճառած վնասի փոխհատուցումը, որի հաշվարկն այժմ իրականացվում է, գործադիրը քննության կառնի առաջիկայում: «ՀՀ Նախագահի հետ այս հարցը մենք քննարկել ենք և որոշում ենք կայացրել, որ մարզերում, համայնքներում ստեղծված հանձնաժողովների առաջարկները քննարկենք և փորձենք հնարավորինս օգնել մեր ժողովրդին: Խնդիրը պարզ է՝ մենք մեր քաղաքացիների բոլոր ցանկությունները չենք կարող բավարարել: Արդեն եղել ենք մի քանի համայնքներում, ուր իրոք մեծ աղետ է տեղի ունեցել: Մարդիկ ունեն վարկեր, ծախսեր են իրականացրել՝ ակնկալելով բերք ստանալ, իրացնել և հետո վարկերը մարել: Նաև առաջարկ կար, որպեսզի վարկերը հետաձգվեն: Կենտրոնական բանկի նախագահ պարոն Ա. Ջավադյանին առաջարկել են, որպեսզի առևտրային բանկերի հետ համագործակցելով՝ հնարավորինս գտնեն մեկ տարով հետաձգվեն գյուղացիների վարկերը: Իսկ նախարարները, գերատեսչությունները պետք է շատ ակտիվ համագործակցեն մարզպետների, քաղաքապետների, գյուղապետների հետ, որպեսզի կարողանանք հնարավորինս օգնել մեր քաղաքացիներին»,- նշել է վարչապետը:

Կառավարությունը որոշում է ընդունել միջազգային վարկատու կազմակերպություններից Երկուսի հետ կնքված «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» վարկային ծրագրերով ձեռք բերված գույքի շահագործումն ապահովելու նպատակով: Որոշման ընդունմամբ, կմեծանա Արագածոտնի մարզի Արտաշավանի, Սյունիքի մարզի Խնձորեսկի, Գեղարքունիքի մարզի Ճամբարակի համայնքներում կառուցված անասնաբուժական սպասարկման կենտրոնների անասնաբուժական ծառայության մատուցման արդյունավետությունը, չորս մարզի 40 և ավելի համայնքում գործող անասնաբույժների համար հասանելի կդառնան սպասարկման կենտրոնների ծառայությունը, սարքավորումն ու գույքը, անասնաբույժների ուսուցումն ու խորհրդատվությունը կշարունակվեն, նրանք տեղեկացված կլինեն ոլորտի նորություններին, արտասահմանյան փորձին, իրականացվող մոնիտորինգի արդյունքներին:

Լրացումներ կատարելով իր նախկին որոշումներից մեկում՝ կառավարությունն աջակցություն է ցուցաբերել Գեղարքունիքի, Արմավիրի, Կոտայքի և Սյունիքի մարզերի մի շարք համայնքներում ուժեղ քամու և կարկտահարության և Շիրակի մարզի Արթիկ քաղաքում՝ հեղեղման հետևանքով վնաս կրած բնակիչներին: Կոտայքի և Արմավիրի մարզերի մի շարք համայնքներում ս.թ. հունիս և հուլիս ամիսներին տեղացած հորդառատ անձրևից և կարկտից տուժել են բնակիչներ, բնակելի տներ և օժանդակ շինություններ, վնասվել գյուղամիջյան ճանապարհներ, հենապատեր: Արմավիրի մարզի մի շարք համայնքների բնակիչներին աջակցելու նպատակով, կառավարության որոշմամբ՝ տրամադրվել է մոտ 22 մլն դրամ, Արթիկ քաղաքի բնակիչներին՝ 3 մլն 800 հազար դրամ: Գեղարքունիքի մարզում հորդառատ անձրևի պատճառով դժվարանցանելի են դարձել Դ30-Անտառամեջ և Դ30-Կալավան մարզային նշանակության ճանապարհները, որոնց պատահաբար վերականգնելու համար հատկացվել է համապատասխանաբար՝ 4 մլն և 6 մլն դրամ: Անձրևի և կարկտի հետևանքով անանցանելի են դարձել Կարճաղբյուրի ներհամայնքային ճանապարհները, որոնց նորոգման նպատակով տրամադրվել է 5 մլն դրամ: Եվս 55 մլն դրամ է հատկացվել Կապան քաղաքի վնասված ճանապարհների վերականգնման համար:

Համայնքային	Էջ 4
Կանխարգելիչ միջոցառում	Էջ 5
Մասնագետի խորհուրդը	Էջ 7

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Քննարկվել է

CARMAC 2 ծրագրի ընթացքը

1



Հանդիպման ընթացքում քննարկվել են ծրագրի շրջանակում «Գլոբալ Էկոլոգիական հիմնադրամի» (GEF) ֆինանսավորմամբ իրականացված արտավայրերի բարելավման և գնահատմանն ուղղված միջոցառումների շարունակման հնարավորությունը, ինչպես նաև՝ Հայաստանում անասնաբուժական սպասարկման կենտրոնների կողմից իրականացվող արհեստական սերմավորման աշխատանքների կազմակերպմանը վերաբերող հարցերը՝ միաժամանակ կարևորելով անասնաբուժական սպասարկման կենտրոնների կարողությունների հզորացման անհրաժեշտությունը:

Կողմերը համակարծիք էին, որ արհեստական սերմավորումը՝ որպես ծրագրի կարևոր բաղադրիչ, էապես կարող է նպաստել ոչ միայն գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակի ավելացմանը, այլև՝ կաթնատվության և մթերատվության բարձրացմանը: Անդրադարձ է կատարվել նաև անասնապահության հետագա զարգացման համար մեծ կարևորություն ունեցող գյուղատնտեսական կենդանիների համարակալման և հաշվառման խնդիրն:

Զրույցի ընթացքում քննարկվել է նաև «Հայաստանում խաղողագործության վերակազմակերպման» (ֆիլոքսերայի դեմ պայքարի) դրամաշնորհային ծրագրի իրականացման հնարավորության հարցը, որի շրջանակում պատվիրակության անդամներն առաջարկել են համատեղ ուսումնասիրել Նոր Զելանդիայի փորձը՝ հետագայում այն Հայաստանում կիրառելու նպատակով: Կողմերը քննարկել են ոլորտին առնչվող այլ հարցեր ևս:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅ

Վարչապետն այցելել է Վայոց ձորի մարզ

Վարչապետ Հովիկ Աբրահամյանն աշխատանքային այց է կատարել Վայոց ձորի մարզ: Կառավարության ղեկավարն այցելել է Եղեգնաձորի «Գոլդեն Գոուդ» պանրի գործարան, որտեղ վարչապետին են ներկայացրել գործարանի արտադրական հզորություններն ու առաջիկա ծրագրերը:

Տեղեկացվել է, որ 2009 թվականից հիմնված գործարանում իրականացվել է շուրջ 200 մլն դրամի ներդրում: Այստեղ արտադրվում է պանրի լայն տեսականի, Նախորդ տարի արտադրական ծավալները հասել են 110-120 տոննայի, ինչը գործարանի հիմնադրման տարվա համեմատ 15 անգամ ավելի է: Նախատեսվում է ընթացիկ տարում Նոր ներդրումների արդյունքում արտադրանքն ավելացնել 20 տոկոսով: ավելացվելու է նաև պանրի տեսականին: Արտադրանքի 90 տոկոսն արտահանվում է Ռուսաստանի Ռաշխություն, իսկ մնացած մասն իրացվում է հայաստանյան շուկայում: Աշխատանքներ են տարվում՝ արտադրանքն Իրան և Ուկրաինա արտահանելու ուղղությամբ: Գործարանն ունի նաև անասնապահական ֆերմա: Կաթի 30 տոկոսն ապահովվում է դրա հաշվին, իսկ 70 տոկոսը մթերվում է մարզում գործող մյուս ֆերմաներից: «Գոլդեն Գոուդ»-ի ղեկավարները շնորհակալություն են հայտնել կառավարությանը՝ ցուցաբերած ֆինանսական օժանդակության համար և նշել, որ դա նպաստել է արտադրական ծավալների ավելացմանն ու Նոր աշխատատեղերի ստեղծմանը: Հովիկ Աբրահամյանն առաջարկել է ներկայացնել գործարանի զարգացման նոր ծրագիր, որի իրագործմանը կառավարությունը կփորձի ցուցաբերել աջակցություն՝ աշխատատեղերը և արտահանման ծավալները էական ավելացնելու համար:

Այնուհետև վարչապետն այցելել է Եղեգնաձորի «Գետնատուն» գինու գործարան՝ ծանոթացել արտադրական գործընթացին և զարգացման հեռանկարներին: Նշվել է, որ 1990 թվականին ստեղծված գործարանում արտադրվում է խաղողի և նռան գինի, մրգային՝ ծիրանի, սալորի, խնձորի պլյուրալային խմիչքներ: Արտադրանքի 70 տոկոսն արտահանվում է ՌԴ, Լեհաստան, այժմ աշխատանքներ են տարվում այլ շուկաներ մուտք գործելու համար: Հովիկ



Աբրահամյանը կարևորել է այս ոլորտի շարունակական զարգացումը և նշել, որ դրա համար առկա է մեծ ներուժ և դրան էապես նպաստելու է նաև գինեգործության զարգացման նորաստեղծ հիմնադրամը:

Այնուհետև վարչապետն այցելել է Վայոց, եղել տեղի բուժօգնությունում, որտեղ Հովիկ Աբրահամյանի հանձնարարությամբ, ստեղծվել է հեմոդիալիզի բաժանմունք՝ Նորագույն սարքավորումներով: Բուժօգնության ղեկավարներն ու բուժում ստացող քաղաքացիները շնորհակալություն են հայտնել կառավարության ղեկավարին՝ բաժանմունքի ստեղծմանն աջակցելու համար:

Վայոցում Հովիկ Աբրահամյանը ներկա է գտնվել վերակառուցված քաղաքային պուրակի բացմանը: Պուրակում քաղաքացիների հանգստի և ժամանցի համար ստեղծվել են անհրաժեշտ պայմաններ: «Վայոց ձոր այցի ընթացքում ականատես եղանք, որ մարզում զարգանում է նաև փոքր և միջին բիզնեսը՝ գինեգործության, պանրագործության, անասնապահության ոլորտներում: Վայոց ձորը գինեգործության ոլորտում ունի մեծ ներուժ և հնարավորություններ և դրանք պետք է առավելագույնս օգտագործել», - նշել է վարչապետը՝ ավելացնելով, որ կառավարությունը պատրաստ է աջակցություն ցուցաբերել՝ ընկերությունների հետագա զարգացմանը: Վարչապետի խոսքով՝ կառավարության և քաղաքապետարանի կողմից լուրջ ծրագրեր են իրականացվում նաև Ջերմուկում՝ ուղղված քաղաքի ենթակառուցվածքների զարգացմանը, որպեսզի Ջերմուկը ավելի գրավիչ դառնա զբոսաշրջության համար:

ԽՈՐՀՐԳԻ ՆԻՍՏ

Քննարկվել է կայուն զարգացման ռազմավարության նախագիծը

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանի նախագահությամբ, տեղի է ունեցել ՀՀ գյուղատնտեսության նախարարին կից հասարակական խորհրդի առաջին նիստը, որին ներկա էին խորհրդին անդամակցող ոլորտի թվով 19 հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Բացելով նիստը՝ նախարար Ս. Կարապետյանը, մինչև հիմնական օրակարգային հարցերին անցնելը, հանդես է եկել ողջույնի խոսքով, որում մասնավորապես շնորհակալություն է հայտնել ներկաներին՝ խորհրդում ընդգրկվելու հայտեր ներկայացնելու համար՝ ընդգծելով քաղաքացիական հասարակության ներգրավվածության կարևորությունը պետական կառավարման համակարգի աշխատանքներում: «Գյուղատնտեսությունը մեր երկրի տնտեսության կառուցվածքում ծանրակշիռ ներդրում ունի, և ես լիաժամ էմ, որ այս նորաստեղծ խորհուրդը, որում ընդգրկված են ոլորտում մեծ հեղինակություն և փորձ ունեցող կազմակերպություններ, ակտիվ գործունեություն կծավալի և առանցքային դերակատարում կունենա նախարարության կողմից ոլորտում տարվող քաղաքականության առավել արդյունավետ իրականացման գործում՝ յուրահատուկ երկխոսության հարթակ դառնալով հանրության և նախարարության միջև»,- նշել է Սերգո Կարապետյանը:

Այնուհետև խորհուրդն անցել է օրակարգային հարցերի քննարկմանը: ՀՀ ԳՆ աշխատակազմի գյուղատնտեսական ծրագրերի վարչության պետ Հրաչյա Ծավենցյանը հանդես է եկել զեկուցմամբ «ՀՀ գյուղատնտեսության ոլորտի վերջին տարիների միտումները և գյուղատնտեսության զարգացման ռազմավարության հիմնական դրույթները» հարցի շուրջ: Անդրադառնալով վերջին 5 տարիների ընթացքում կատարված աշխատանքներին՝ Հրաչյա Ծավենցյանը նշել է, որ այս ընթացքում գյուղատնտեսությունում էական դրական տեղաշարժեր են արձանագրվել, 2011-2015 թթ. ոլորտը ձևավորվել է երկրի ՀՆԱ-ի 18.6 %-ը, իսկ ագրոփերմամշակող ոլորտի հետ միասին՝ գրեթե 25.0 %-ը: 2015 թվականին գյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքը կազմել է 1002.2 մլրդ դրամ, որը գերազանցել է Նախորդ տարվա ցուցանիշը 11.7 %-ով: 2012, 2013 և 2014 թթ. գյուղատնտեսության ոլորտում տնտեսական աճը կազմել էր համապատասխանաբար՝ 9.5, 7.1 և 7.2 %:

Գյուղատնտեսության տնտեսական աճի հետ մեկտեղ, կարևորագույն ձեռքբերումներից է ոլորտի հիմնական ռեսուրսի՝ գյուղատնտեսական հողերի օգտագործման մակարդակի բարձրացումը: Ընդհանուր առմամբ, հանրապետությունում կտրուկորեն նվազել է գյուղատնտեսության մշակաբույսերի ցանքատարածությունները 2010-2015 թվականների ընթացքում ավելացել են 68.2 հազ. հեկտարով, միայն 2015 թվականին՝ 19.0 հազ. հեկտարով և կազմել են 351.8 հազ. հեկտար: Վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակը 2015 թվականին կազմել է 78.8 %, 2014 թվականին 74.4 %-ի և 2010 թվականի 63.2 %-ի դիմաց: Չեկուցողը մանրամասնորեն ներկայացրել է հաշվետու ժամանակահատվածում բուսաբուծության և անասնաբուծության ճյուղերում արձանագործված զարգացման միտումները, ներկայացրել պետական աջակցության ծրագրերի արդյունքային ցուցանիշները: Այնուհետև ներկաների ուշադրության են ներկայացվել ՀՀ գյուղատնտեսության 2016-2025 թթ. կայուն զարգացման ռազմավարության նախագիծը հիմնադրույթները: Մասնավորապես, անդրադարձ է կատարվել ագրարային ոլորտում տնտեսավարման արդյունավետ ձևերի, մասնավորապես կոոպերացիայի զարգացմանն ու գյուղացիական տնտեսությունների խոշորացման խթանմանը, պարենային ապահովության (անվտանգության) մակարդակի բարձրացմանն ու հիմնական պարենային մթերքների ինքնաբավության նվազագույն մակարդակի ապահովմանը: Բացի այդ, կարևորվել են նաև գյուղատնտեսությունում տնտեսավարողներին հասցեական աջակցության (սուբսիդավորման) մեխանիզմների կատարելագործման, սննդամթերքի անվտանգության միջազգայնորեն ընդունված չափանիշների ներդրման, հողային ռեսուրսների նպատակային օգտագործման մակարդակի և արդյունավետության բարձրացման, գյուղատնտեսական հումքի վերամշակման ոլորտի զարգացմանն ու այլ խնդիրներ:



Չեկուցումից հետո խորհրդի անդամները քննարկել են մի շարք հարցեր՝ կլիմայի գլոբալ փոփոխությունների, ջրօգտագործման, գինեգործության, խաղողագործության, սպանդանոցների գործունեության, գյուղատնտեսության ապահովագրության և այլ հարցերի վերաբերյալ: Ամփոփելով նիստը՝ նախարարը կոչ է արել խորհրդի անդամներին մշտական կապ պահպանել նախարարության հետ և առաջարկություններ ներկայացնել իրենց հետաքրքրող հարցերի շուրջ՝ պատրաստակամություն հայտնելով բաց և թափանցիկ քննարկել բոլոր բարձրացված խնդիրները և համատեղ լուծումներ գտնել:

Չեկուցումից հետո խորհրդի անդամները քննարկել են մի շարք հարցեր՝ կլիմայի գլոբալ փոփոխությունների, ջրօգտագործման, գինեգործության, խաղողագործության, սպանդանոցների գործունեության, գյուղատնտեսության ապահովագրության և այլ հարցերի վերաբերյալ: Ամփոփելով նիստը՝ նախարարը կոչ է արել խորհրդի անդամներին մշտական կապ պահպանել նախարարության հետ և առաջարկություններ ներկայացնել իրենց հետաքրքրող հարցերի շուրջ՝ պատրաստակամություն հայտնելով բաց և թափանցիկ քննարկել բոլոր բարձրացված խնդիրները և համատեղ լուծումներ գտնել:

ՇՈՒԿԱ

ՎԵՐԱԲԱՑՎԵԼ Է ՄԱՇՏՈՑԻ
ՊՈՂՈՏԱՅՈՒՄ ԳՈՐԾՈՂ
ԳՅՈՒՂՄԹԵՐՔԻ ՏՈՆԱՎԱՃԱՌԸ

Հուլիսի 23-ին մայրաքաղաքի Կենտրոն վարչական շրջանում՝ Մաշտոցի պողոտային հարող տարածքում («Մալիբու» սրճարանի հարևանությամբ), վերաբացվել է գյուղատնտեսական մթերքների երկրորդ տոնավաճառը: Տոնավաճառը կազմակերպվում է ՀՀ գյուղատնտեսության նախարարության նախաձեռնությամբ և Երևանի քաղաքապետարանի աջակցությամբ՝ սկսած 2011 թվականից:

թվականին Մաշտոցի պողոտայում և Կասյան փողոցում կազմակերպվել է 114 տոնավաճառ, որոնց մասնակցել է շուրջ 15 հազար գյուղացիական տնտեսություն: Տոնավաճառները գործում են շաբաթ և կիրակի օրերին:

Գյուղացիական տնտեսությունների մասնակցությունն անվճար է: Տոնավաճառներին մասնակցելու համար անհրաժեշտ է դիմել գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոններ (ԳԱՄԿ) և



Հիմնական նպատակն է՝ աջակցել գյուղացիական տնտեսություններին առանց միջնորդների կազմակերպել իրենց կողմից արտադրված գյուղմթերքի իրացումը, ինչպես նաև մայրաքաղաքի բնակիչներին հնարավորությամբ

ստանալ համապատասխան տեղեկանքներ, որոնք կհավաստեն, որ վաճառքի ներկայացվող ապրանքը հանդիսանում է տվյալ մասնակցի սեփական արտադրանքը: Առևտրային միջնորդների մասնակցությունը բացառելու



յուն ընձեռել անմիջապես արտադրողից ձեռք բերել թարմ և որակյալ գյուղմթերք:

Տոնավաճառում արդեն իսկ 120 գործող տաղավարներ կան, մասնակցում են հանրապետության տարբեր մարզեր ներկայացնող գյուղացիական տնտեսություններ: Գյուղմթերքի տոնավաճառ կազմակերպվում է նաև Կասյան փողոցի վերջնամասում, որը վերաբացվել է հունիսի 11-ին: Այստեղ այս տարի օրական սպառվել է շուրջ 40-50 տոննա գյուղմթերք:

Ընդհանուր առմամբ, 2015

նպատակով կազմակերպիչների կողմից տեղում իրականացվում է վերահսկողություն:

Մասնակիցներին ՀՀ գյուղատնտեսության նախարարությունն անվճար հիմունքներով տրամադրում է հարմարավետ վրաններ, վաճառասեղաններ, կշեռքներ ու սայլակներ:

Երևանի քաղաքապետարանը իր հերթին աջակցում է տարածքի տրամադրման հարցում և յուրաքանչյուր տոնավաճառ, օրվա ավարտին իրականացնելու է տարածքի մաքրման աշխատանքներ:

ՈՐՈՓՈՒՄ

ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԱՊԱՀՈՎՎԵՑ ԴՍԵՂԻ
ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄԸ

Երկու տարի առաջ Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանը գյուղական համայնքների զարգացման հրատարակած հիմնախնդիրների թվում՝ որպես կենսական մեծ կարևորության հարց, ՀՀ կառավարություն ներկայացրեց նաև մարզի մի շարք համայնքներում խմելու ջրամատակարարման բարելավման խնդիրը:

Ուսումնասիրության արդյունքում՝ գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակին («ԳՏՏՁ ԾԻԳ» ՊՀ) հանձնարարվեց ՀՀ կառավարության վարչային միջոցների հաշվին, ձեռնարկել Լոռու մարզի Դսեղ, Կաթնաջուր, Սվերդլով, Ճոճկան և Մեծ Այրում համայնքների ջրամատակարարման բարելավման աշխատանքներ՝ ընդհանուր առմամբ, ավելի քան 2 մլրդ դրամ ծավալով: Հետազոտական և նախագծային աշխատանքներից հետո, 2015 թվականին նշյալ համայնքներում մեկնարկեց ջրահավաք և ջրաբաշխիչ համակարգերի շինարարությունը, որն այս պահին արդեն ավարտական փուլում է:

Օրերս Լոռու մարզպետի տեղակալ Արսեն Դարբինյանը, մարզպետարանի աշխատակիցների հետ այցելեց Դսեղ՝ տեղում ծանոթանալու կատարված աշխատանքների ընթացքին: Այստեղ ջրագծերի կառուցումն իրականացրել է «Արարատշին» տրեստը (կառավարիչ՝ Գեորգի Թովմասյան)՝ Էդիկ Աբալյանի աշխղեկությամբ: Վերջինիս տեղեկացմամբ, շինարարական, մոնիտինգային աշխատանքներն արդեն մոտ են վերջնագծին: Անչափ բարդ ռելիեֆային պայմաններում՝ գյուղից մոտ 1000 մետր բարձունքների վրա տարածված ջրաղբյուրների ջուրը որակյալ խողովակներով հասցվել է վերակառուցված 1000 խորանարդ մետր տարողունակությամբ ջրաբաշխիչ կայաններ, որտեղից կենարար հեղուկը հասնում է բնակարաններ՝ լիովի ապահովելով ավելի քան 2200 բնակչության պահանջարկը: Ընդհանուր առմամբ, անց է կացվել 20 կմ ջրագիծ և 27 կմ ներքին ջրաբաշխիչ ցանց:

Դսեղի համայնքապետարանի դահլիճում հրավիրված հանդիպմանը գյուղի ղեկավարությունը, բնակիչներն իրենց համար անգնահատելի կենսական խնդրի լուծման համար իրենց երախտագիտությունն արտահայտեցին

Լոռու մարզպետին՝ իրենց խնդրանքը հանրապետության ղեկավարության ուշադրությանն արժանացնելու և հայրենի կառավարությանը՝ թանկարժեք ծրագրի համար միջոցներ հատկացնելու համար:

Փոխմարզպետ Ա. Դարբինյանը տեղեկացրեց, որ հանրապետության ղեկավարության՝ ՀՀ Նախագահի և վարչապետի հանձնարարա-



կանով, վերջին 2 տարում Լոռու մարզում իրականացվել է աննախադեպ՝ շուրջ 15 մլրդ դրամի տարբեր համայնքային ծրագրեր՝ ավտոճանապարհներ, ջրագծեր, համայնքային նշանակության զանազան կառույցներ: Ծուռով կմեկնարկի մարզի գլխավոր մայրուղու՝ Վանաձոր-Բագրատաշեն ավտոճանապարհի վերակառուցումը: Այս ամենը այլևայլ նշանակությունից գատ, կարևոր գործոն կդառնա մարզում զբոսաշրջության զարգացման համար: «Հայրենի և հատկապես արտերկրի զբոսաշրջիկներին հրապուրելու կարևոր գրավականներից մեկը՝ համայնքներում նրանց համար հանգստի ու ժամանցի բարձրակարգ պայմանների ապահովումն է», - նշել է Ա. Դարբինյանը:

Փոխմարզպետը նաև կարևորել է սեփական եկամուտների հավաքագրման վիճակը, որը ոչ միայն համայնքի բարեկեցության բարելավման բանալին է, այլև կարևոր գործոն է հանրապետական ու միջազգային տարբեր զարգացման ծրագրերում ընգրկվելու հնարավորությունից օգտվելու համար: Դսեղիցները մարզի և հանրապետության ղեկավարությունից ակնկալում են աջակցություն՝ գյուղի փողոցային լուսավորության անցկացման հարցում:

www.lori.mtaes.am

ՀԱՍՏԱԳՈՐԾԱԿՆՈՒԹՅՈՒՆ

ՈՐԱԿՅԱԼ, ԱՆՎՏԱՆԳ ԵՎ ՀԱՄԵՂ ԱՐՏԱԴՐԱՆՔ

Չինաստանի Ժողովրդական Հանրապետության CEIEC ընկերության Ասիայի և Միջին Արևելքի բիզնես ղեկավարամենտի ղեկավարներ՝ Ջինգզին Վանգը և Ժոու Լին համագործակցության այցով օրերս Հայաստանի ազգային ագրարային համալսարանում էին:

Այցի շրջանակներում չինական պատմիրականության անդամները հանդիպում ունեցան ՀԱԱՀ ղեկավար, պրոֆ. Ա.Թարվերդյանի և Արտաքին կապերի ղեկավարամենտի աշխատակիցների հետ: CEIEC-ը (China National Electronics Import & Export Corporation) աշխարհի 500 խոշորագույն ընկերությունների շարքում է: Ջբաղվում է գյուղատնտեսության ոլորտում տեխնիկական սարքավորումների և միջոցների արտադրմամբ, ինչպես նաև ժամանակակից տեխնիկական միջոցներով գյուղատնտեսական արտադրանքի ստացման աշխատանքներով:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին համագործակցության իրատեսական ոլորտներն ու ուղիները, որոնք կարող են շահեկան լինել երկու կողմերի համար: Ինչպես նշեց ղեկավար Ա. Թարվերդյանը, համալսարանի ուսումնափորձնական տնտեսությունում մշակաբույսերի համատեղ մշակումն ու ստացված մթերքների սպառումը ՀԱԱՀ-ի և CEIEC-ի միջև համագործակցության սկիզբ կարող է լինել: Չինական ընկերության ներկայացուցիչներն հավելեցին, որ հետաքրքրված են Հայաստանի հետ փոխգործակցությամբ, ինչը պայմանավորված է գյուղատնտեսական որակյալ, անվտանգ և համեղ արտադրանքի առկայությամբ:

Հանդիպման արդյունքում ՀԱԱՀ-ի և CEIEC ընկերության միջև կնքվեց համագործակցության հուշագիր. այն արդյունավետ փոխգործակցության հիմք կդառնա: Միաժամանակ, չինական պատմիրականության անդամները խոստացան օժանդակել Ագրարային համալսարանին՝ Չինաստանից մագիստրանտների ներգրավման հարցում:

Հարկ է նշել, որ սա մեծ հնարավորություն է համալսարանի համար՝ մուտք գործել չինական լայնածավալ շուկա և սկսել փոխշահավետ համագործակցություն:

ՀԱԱՀ

Արտաքին կապերի ղեկավարամենտ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ

**ՀԱՄԱՅՆՔ, ՈՐԸ ԳՐԵԹԵ
ԽՆԴԻՐՆԵՐ ԶՈՒՆԻ**

«Մեր գյուղում գրեթե չլուծված խնդիրներ չկան: Վերանորոգվել են գյուղամիջյան ճանապարհները, բարվոք վիճակում են դպրոցը և բուժամբուլատորիան: Իսկ առաջիկայում կկառուցվի նաև մանկապարտեզ»,- ասում է Վարդաձորի համայնքի ղեկավար Ռոբերտ Սիրականյանը:

Գյուղում լիարժեքորեն լուծված է նաև խմելու և ոռոգման ջրամատակարարման հարցը: Ընթացքում են միջհամայնքային ճանապարհների և խմելու ջրատարների նորոգման աշխատանքները: Բնակիչների թիվը գերազանցում է 3000-ը: Վարդաձորն ունի զարգացած անասնաբուծություն, գյուղում հաշվվում են 1350 գլուխ խոշոր, շուրջ 500 գլուխ մանր եղջերավոր կենդանիներ: Բուսաբուծական ճյուղերից զարգացած է կարտոֆիլաբուծությունը, այս տարի կարտոֆիլի տունկ է կատարվել 50 հա-ի վրա: Տնկում են կաղամբ, ինչպես նաև ցանում են բանջարանոցային այլ մշակաբույսեր, որով ապահովում են թե սեփական կարիքները, և թե իրականացնում վաճառքը: Գյուղապետի տեղեկացմամբ, միայն կարտոֆիլի իրացման ուղղությամբ է, որ կան հիմնախնդիրներ: Այլ գյուղմթերքների իրացման գծով դժվարություններ չկան: Գյուղապետի կար-



ծիքով, իրացման խնդիրը հնարավոր է լուծել արտահանման ճանապարհով:

Ինչ վերաբերում է անասնաբուծությանը, ապա աշխատանքների ճիշտ կազմակերպման արդյունքում, այն դարձել է եկամտաբեր: Բուծվում են հոլշտին, շվից և սիմմենթալ ցեղի բարձր մթերատու կենդանիներ, որոնց տարեկան միջին կաթնատվությունը 4000 լիտր է: Կենդանիների զուգավորումը կատարվում է արհեստական սերմնավորման ճանապարհով:

Արտավայրերի հերթափոխային արածեցման արդյունքում պահպանվում է բուսածածկը: Այդ նպատակով կախված սեզոնից, կենդանիները պարբերաբար տեղափոխվում են տարբեր տարածքներ: Այս օրերին գյուղում մեծ քանակությամբ կաթ է արտադրվում, որի մի մասը վաճառվում է, մնացածը՝ վերամշակվում գյուղի կաթի վերամշակման փոքր արտադրամասում: Գյուղապետի տեղեկացմամբ, արտադրամասի սարքավորումների վերաթարմացման անհրաժեշտություն կա և, այդ ուղղությամբ արդեն քայլեր են ձեռնարկվում:

Թեև տարածքի բնակիչներին բնորոշ է արտագնա աշխատանքի մեկնելը, այնուամենայնիվ, Վարդաձորում ստեղծվել են բոլոր անհրաժեշտ պայմաններ, որպեսզի գյուղացին մնա և աշխատի հայրենի գյուղում: Այդ պատճառով էլ ծագած բոլոր խնդիրները շուտափույթ լուծում են գտնում:

Նելլի Սահակյան

ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Ե ՄԱՍՆԱԳԵՏԸ

**ՊԱՐԱՐՏԱՑՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԿՏԱՀԱՐՎԱԾ
ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԱՐԱԳ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ**

Կարկտահարությունները ամեն տարի զգալի վնասներ են հասցնում գյուղատնտեսությանը: Տուժում է ինչպես բազմամյա, այնպես էլ՝ բանջարաբուստանային մշակաբույսերի բերքի զգալի մասը, երբեմն՝ նաև ամբողջ բերքը: Ի՞նչ միջոցառումներ պետք է իրականացնել՝ կարկտահարված տարածքների արագ վերականգնման համար: Մեր գրուցակիցն է «Ագրոքիմիական ծառայություն» ՊՈԱԿ-ի տնօրեն ՎԱԶԱԳԱՆ ԴԱՎԹՅԱՆԸ:

-Պարոն Դավթյան, մասնագետները հորդորում են, որ կարկտահարված ցանքատարածքների արագ վերականգնման համար պետք է պարարտացնել հողը: Ի՞նչ պարարտանյութեր պետք է օգտագործել և ի՞նչ քանակությամբ:

-Ես այն կարծիքին եմ, որ չպետք է մտածել, որ կարկտահարվեց դաշտը, ուրեմն այնտեղ ոչինչ անել չի կարելի: Չպետք է հուսահատվել, քանի որ, որոշակի միջոցառումների իրականացման արդյունքում, հնարավոր է մեղմել վնասը: Մենք միշտ խորհուրդ ենք տալիս հողօգտագործողներին, որպեսզի կարկտահարությունից հետո սպասեն մասնագետների այցին, դիմեն նրանց օգնությանը: Եթե բերքը վնասվել է նույնիսկ 50-60 %-ով, ճիշտ մոտեցման դեպքում կարելի է որոշակիորեն վերականգնել այն: Այդպիսով՝ հնարավոր է մշակաբույսերի վրա կատարված ծախսերը փակել և նույնիսկ շահույթ ստանալ: Կարկտահարությունները կարող են լինել զարնանը և ամռան սկզբներին և նույնիսկ աշնանը: Պետք է հաշվի առնել, թե բույսերի վեգետացիայի ո՞ր փուլում է կարկտուղ վնաս պատճառել: Եթե նոր ցանքեր են, պետք է մտածել կրկնացանքի կամ լրացում կատարելու մասին: Իսկ եթե կարկտահարության հետևանքով տուժել է բերքը, պետք է վնասի չափի մեղմմանն ուղղված միջոցառումներ կատարել:

-Ինչի՞ց սկսել, որպեսզի գործընթացն արդյունավետ լինի:

-Բանջարաբուստանային մշակաբույսերի պարագայում, բնականաբար, վնասի չափերն ուսումնասիրելուց հետո, պետք է փորձել հնարավորինս մեղմել այն՝ հիմնականում պարարտացման միջոցով: Հարկ է նշել, որ միայն կարկտահարության և ցրտահարության դեպքերում է, որ կարելի է կատարել միակողմանի պարարտացում, այն էլ միայն ազոտական պարարտանյութով: Վերջինս նպաստում է բույսերի արագ աճին և վերականգնում վնասված օրգանները: Պարարտանյութերի չափաբաժինը կախված է վնասվածության աստիճանից, այն հեկտարի հաշվով կարող է տատանվել 100-450 կգ-ի սահմաններում:

վել 100-450 կգ-ի սահմաններում:

-Եթե կարկտուղ վնասել է այս կամ այն մշակաբույսին բերքի հատուկացման շրջանում, ինչպե՞ս վարվել այդ դեպքում:

-Այդ դեպքում ցանկալի է պարարտացնել կարբամիդ (միզանյութ) տեսակի ազոտական պարարտանյութով, որպեսզի խուսափենք նիտրատների և նիտրիտների վնասակար մնացորդներից: Մնացած դեպքերում խորհուրդ է տրվում պարարտացնել ամոնիումի սելիտրայով, որն ինչպես արդեն նշեցինք, արագացնում է բույսերի աճը, որն էլ իր հերթին նպաստում է վերականգնման գործընթացին:

-Իսկ ինչպե՞ս պետք է կազմակերպել պարարտացումը բերքահավաքի ընթացքում: Այն արդյո՞ք կանխարդառնա՞ բերքի որակական հատկանշների վրա:

-Մենք հորդորում ենք հողօգտագործողներին, որ բոլոր տեսակի քիմիական մշակումները դադարեցնեն բերքահավաքից 20-25 օր առաջ: Դարձյալ խորհուրդ ենք տալիս օգտագործել կարբամիդ տեսակի ազոտական պարարտանյութ: Նրանք, ովքեր հետևում են մասնագետների խորհուրդներին, կարողանում են արագորեն վերականգնել կարկտից տուժած ցանքատարածքները, ստանալ բարձր ու կայուն բերք:

-Իսկ ինչպե՞ս վարվել հացահատիկային մշակաբույսերի պարագայում:

-Ի՞նչ վերաբերում է հացահատիկային մշակաբույսերին, եթե այն տեղի է ունեցել հասունացման փուլում, ապա ոչինչ անել հնարավոր չէ, քանի որ ամբողջությամբ վնասվում են հասկերը: Այսպես օրինակ, թափվում են հատիկները, պառկում է դաշտը: Այդ դեպքում, խորհուրդ ենք

տալիս ձեռնպահ մնալ որևէ միջոցառում իրականացնելուց, քանի որ անխմաստ է ինչ-որ գործողություն կատարելը:

-Իսկ ինչպե՞ս պետք է վերականգնվեն կարկտահարությունից տուժած բազմամյա տնկարկները:

-Կարկտուղ մեծ վնաս է պատճառում խաղողի վազերին և ծառերին: Շատ ծառեր ամռան կեսին տերևաթափվել, մերկացել են: Ջարդվել են



նույնիսկ ճյուղերը: Հատկանշական այն է, որ բազմամյա տնկարկների դեպքում, բացի այս տարվա վնասվածից, երբեմն վնասվում է նաև հաջորդ տարվա սպասվող բերքը: Այն կանխելու համար, բացի պարարտացումից, կարևոր միջոցառում է համարվում նաև վազերի կամ ծառերի ճիշտ ձևավորումը, որը ցանկալի է կատարել մասնագետի ցուցումով: Ամոնիումի սելիտրայով պարարտացումն արագացնում է շվերի և ճյուղերի հասունացումը: Բացի այդ՝ այն դրական ազդեցություն է ունենում հաջորդ տարվա սպասվող բերքի որակի և քանակի վրա:

Նելլի Սահակյան

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Օրերս Տավուշի մարզպետարանում ստորագրվեց եռակողմ փոխըմբռնման հուշագիր՝ ՀՀ Տավուշի մարզպետարանի, ՕՔՄՖԱՄ-ի հայաստանյան մասնաճյուղի և «ՕքսեՋեն» երիտասարդության և կանանց իրավունքների պաշտպանության հիմնադրամի միջև:

ՍՏՈՐԱԳՐՎԵՑ ԵՌԱԿՈՂՄ ՓՈԽԸՄԲՐՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Հուշագիրը ստորագրեցին ՀՀ Տավուշի մարզպետի տեղակալ Լևոն Սարգսյանը, ՕՔՄՖԱՄ-ի հայաստանյան մասնաճյուղի տնօրեն Մարգարիտա Հակոբյանը և «ՕքսեՋեն» երիտասարդության և կանանց իրավունքների պաշտպանության հիմնադրամի տնօրեն Ռուզաննա Ստեփանյանը: Հուշագրի ստորագրման արարողությանը ներկա էին Տավուշի մարզպետի տեղակալ Վարդան Ալեքսանյանը, մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Սվետլանա Դավթյանը, համապատասխան ոլորտների պատասխանատուներ: Հուշագիրը վերաբերում է Տավուշի մարզի համայնքների դիմակայունության բարձրացմանը, գյուղատնտեսության զարգացման և աղետների ռիսկերի նվազեցման ոլորտներում համագործակցությանը: Իր խոսքում Մարգարիտա

Հակոբյանը կարևորեց սահմանամերձ Տավուշի մարզում համայնքների տնտեսական զարգացումն ու դիմակայունության բարձրացումը և այդ նպատակով գյուղատնտեսության զարգացմանն ու աղետների ռիսկերի նվազեցման ծրագրերի շարունակականությունը, որը կապահովվի առաջիկա երեք տարիների համագործակցությամբ:

Մարզպետի տեղակալ Լևոն Սարգսյանը Տավուշի մարզպետ Հովիկ Աբովյանի անունից շնորհակալություն հայտնեց ՕՔՄՖԱՄ-ին մարզի գյուղատնտեսության ոլորտում իրականացրած արդյունավետ ծրագրերի համար՝ համոզմունք հայտնելով, որ համագործակցությունն այսուհետև ևս կլինի ակտիվ, իսկ համայնքների կայուն զարգացման գործում կարևորեց պետական, հասարակական և միջազգային կառույցների համագործակցությունը:

www.tavush.mtaes.am

ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՏՎԵՑԻՆ
ՑԱՆԿԱԼԻ ԱՐԴՅՈՒՆՔ

ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2016 թվականի մայիսի 20-ի N 135-Ա հրամանի համաձայն, «Անասնաբուժասանհիտարիայի և բուսասանհիտարիայի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի մարզային մասնաճյուղի ագրոնոմների կողմից Հայաստանի Հանրապետությունում իրականացվել է լուլիկի ականող ցեց, կարտոֆիլի ցեց, խնձորենու պղտակեր և խաղողի ողկուզակեր վնասատուների մոնիթորինգ: «Ագրոլրատուի ընթերցողների ենթակայացում» «Անասնաբուժասանհիտարիայի և բուսասանհիտարիայի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Արմեն Ավագյանի հարցազրույցը:

ողկուզակերի թիթեռի թիվը կազմել է 20-22, իսկ կարտոֆիլի ցեցի թակարդներում դարձյալ կարտոֆիլի ցեցի թիթեռ չի հայտնաբերվել:

- Իսկ ինչպիսիք արդյունքներ արձանագրվեցին մոնիթորինգի ընթացքում հանրապետության մյուս մարզերում:

- Այսպես, Կոտայքի մարզի համայնքներում տեղադրված լուլիկի ականող ցեցի թակարդներում հաշվառվել է 10-24 ցեցի թիթեռ, իսկ խնձորի պտղակերի թակարդներում՝ 24-26 պտղակերի թակարդներում:



- Պրն. Ավագյան, լուլիկի ականող ցեց, կարտոֆիլի ցեց, խնձորենու պղտակեր և խաղողի ողկուզակեր վնասատուների տարածման արեալների ճշգրտան նպատակով, ինչ աշխատանքներ են կատարվել:

- Դրանց դեմ պայքարի միջոցառումների ժամկետների որոշման նպատակով, ֆերմանային թակարդների միջոցով, իրականացվել է մոնիթորինգ: Հայաստանի Հանրապետության 252 համայնքներում, հունիսի 7-10-ը ընկած ժամանակահատվածում, տեղադրվել է լուլիկի ականող ցեցի՝ 500, կարտոֆիլի ցեցի՝ 125, խնձորի պտղակերի՝ 100, խաղողի ողկուզակերի 100 թակարդներ: Միաժամանակ կազմվել է արձանագրություն՝ յուրաքանչյուր համայնքում տեղադրված թակարդների քանակի վերաբերյալ, որը վավերացվել է համայնքի ղեկավարի կողմից: Բացի այդ, տրված է համապատասխան ուղեցույց՝ աշխատանքների գործընթացը կազմակերպելու համար: Կազմակերպության բուսասանհիտարիայի բաժնի մասնագետների կողմից մշակվել է ծանուցագիր, որտեղ առաջարկվում է բույսերի պաշտպանության միջոցների ցանկը հերթափոխային եղանակով ընտրելով, որևէ միջատասպան պատրաստուկ, քիմիական պայքարի աշխատանքները կազմակերպելու համար:

- Իսկ ինչ պարբերականությամբ է իրականացվել մոնիթորինգը:

- Մոնիթորինգն իրականացվել է շաբաթը մեկ անգամ, հաշվառվել են սոսնձաթղթերում առկա թիթեռների քանակը և գրանցվել գրանցամատյաններում: Իրականացված մոնիթորինգի արդյունքում, ամսվա ընթացքում, 1 անգամ փոխվել է ֆերմաները (գլխիկը) և երկու անգամ սոսնձաթղթերը: Տեղեկացնենք, որ Արարատի մարզի համայնքներում տեղադրված լուլիկի ականող ցեցի թակարդներում հաշվառվել է 17-43 ցեցի, իսկ խնձորի պտղակերի թակարդներում՝ 5-22 պտղակերի թիթեռ: Խաղողի ողկուզակերի թակարդներում հաշվառվել է 24-60 ողկուզակերի թիթեռ: Ի դեպ, կարտոֆիլի ցեցի թակարդներում ցեցի թիթեռ չի հայտնաբերվել: ՀՀ Արմավիրի մարզի համայնքներում տեղադրված լուլիկի ականող ցեցի թակարդներում հաշվառվել է 7-12 ցեցի թիթեռ, իսկ խնձորի պտղակերի թակարդներում՝ 6-10 պտղակերի թիթեռ: Ինչ վերաբերում է խաղողին, ապա այստեղ ողկուզակերի թակարդներում ողկուզակերի թիթեռի թիվը հասել է 15-18-ի: Կարտոֆիլի ցեցի թակարդներում կարտոֆիլի ցեցի թիթեռ չի հայտնաբերվել:

Տավուշի մարզի համայնքներում տեղադրված լուլիկի ականող ցեցի թակարդներում հաշվառվել է 7-8 ցեցի թիթեռ, իսկ խնձորի պտղակերի թակարդներում՝ 8-10 պտղակերի թիթեռ: Խաղողի ողկուզակերի թակարդներում

րի թիթեռ: Ուրախությամբ փաստենք, որ կարտոֆիլի ցեցի թակարդներում կարտոֆիլի ցեցի թիթեռ չի հայտնաբերվել: Գեղարքունիքի և Շիրակի մարզերի համայնքներում տեղադրված լուլիկի ականող ցեցի, կարտոֆիլի ցեցի և խնձորի պտղակերի թակարդներում թիթեռներ չեն հայտնաբերվել: Վայոց ձորի մարզի համայնքներում տեղադրված լուլիկի ականող ցեցի թակարդներում հաշվառվել է 8-14 ցեցի, իսկ խնձորի պտղակերի թակարդներում՝ 20-22 պտղակերի թիթեռ: Խաղողի ողկուզակերի թակարդներում հաշվառվել է 8-10 ողկուզակերի թիթեռ: Կարտոֆիլի ցեցի թակարդներում կարտոֆիլի ցեցի թիթեռ չի հայտնաբերվել:

- Այսինքն, կարող ենք ասել, վիճակը, կարծես թե անհամեմատ բարվոք է նաև մյուս մարզերում:

- Լոռու մարզի համայնքներում տեղադրված լուլիկի ականող ցեցի թակարդներում հաշվառվել է 4-5 ցեցի, իսկ խնձորի պտղակերի թակարդներում՝ 7-8 պտղակերի թիթեռ: Կարտոֆիլի ցեցի թակարդներում կարտոֆիլի ցեցի թիթեռ չի հայտնաբերվել: Արագածոտնի մարզի համայնքներում տեղադրված լուլիկի ականող ցեցի թակարդներում հաշվառվել է 6-7 ցեցի թիթեռ, իսկ խնձորի պտղակերի թակարդներում՝ պտղակերի 24-32 թիթեռ: Խաղողի ողկուզակերի թակարդներում հաշվառվել է 20-30 ողկուզակերի թիթեռ: Կարտոֆիլի ցեցի թակարդներում կարտոֆիլի ցեցի թիթեռ չի հայտնաբերվել: Ուրախսալի է, որ ՀՀ Սյունիքի մարզի համայնքներում տեղադրված լուլիկի ականող ցեցի և կարտոֆիլի ցեցի թիթեռ չի հայտնաբերվել: Ի դեպ, խնձորի պտղակերի թակարդներում հայտնաբերվել է 15-30 պտղակերի թիթեռ:

- Իսկ ինչ աշխատանքներ են հաջորդել մոնիթորինգին:

- Այն համայնքներում, որտեղ հինգից ավել լուլիկի ականող ցեցի թիթեռներ են հայտնաբերվել, ծանուցվել են համայնքի ղեկավարներին և հողօգտագործողներին, որպեսզի կազմակերպվեն քիմիական պայքարի աշխատանքներ, իսկ խնձորենու պտղակերի և խաղողի ողկուզակերի թիթեռների համար ընտրվել է վնասատուի առավելագույն քանակը (պիկը): Մասնագետների կողմից դիտարկումների և խորհրդատվության տրամադրումը դեռևս շարունակվում է:

Հարցազրույցը՝
Նելլի Սահակյանի

ՄԱՐԴԿԱՆՑ
ՈԳԵՇՆՉԵԼՈՒ
ԼԱՎԱԳՈՒՅՆ
ՕՐԻՆԱԿԸ ԳՐԱՆՑՎԱԾ
ԱՐԴՅՈՒՆՔՆ Է

Վայոց ձորի սահմանամերձ Խնձորուք համայնքում միակ անասնաբույժը 29-ամյա Սևադան է: Մասնագիտությունն ընտրել է նախկին անասնաբույժի խորհրդով: Քաղաքում ապրելու պարբերներ չունի, իսկ գյուղում ապրելու համար, վստահ է, իր մասնագիտությունն օգտակար է: Այսօր էլ երիտասարդ մասնագետը շարունակում է խորացնել գիտելիքները և ուսումը շարունակում է Սիսիանի ագրարային համալսարանում:

Խնձորուք համայնքը «Անասնապահության զարգացում» Հայաստանի



հարավում» ծրագրին միացել է 2015 թ.: Ծրագրի ջանքերով համայնքում բացվել է անասնաբուժական կետ, բարելավվել են անասնաբուժական ծառայությունները: Մինչև 2015 թ. Սևադան Հմայկյանի համար անասնաբուժությունը սահմանափակվում էր պետական միջոցառումներով, երբեմն՝ առանձին կանչերով: Գործիքներ չունեն, դեղորայքը դժվարությամբ էին ձեռք բերում, կանչերի դեպքում վճարում էին միայն դեղորայքի գումարը: Նրա խոսքով՝ աշխատանքն արդյունավետ չէր. դեղորայքի գները ամենամոտ կետը Վայքն էր, արդյունքում՝ երբեմն դեղն ուշանում էր, կենդանին՝ սատկում:

2015 թ. նոյեմբերին, ծրագրի աջակցությամբ, Խնձորուքում բացվեց անասնաբուժական կետ, որն ապահովվեց անհրաժեշտ դեղորայքով և գործիքներով, իսկ անասնաբույժը մասնակցեց մի շարք վերապատրաստման դասընթացների: Այսօր Սևադանի համար այն դարձել է փոքրիկ բիզնես. դեղորայքն արդեն ձեռք է բերում սեփական միջոցներով, մարդիկ էլ աստիճանաբար սովորում են վճարել ոչ միայն դեղորայքի, այլև՝ անասնաբուժական ծառայությունների համար: Բացի այդ, վերապատրաստման դասընթացների շնորհիվ, երիտասարդ մասնագետը մատուցում է տարաբնույթ անասնաբուժական ծառայություններ, իսկ 2016 թ. հունվարից կատարում է նաև կենդանիների արհեստական սերմնավորում, ինչը երկար տարիներ գյուղում չի իրագործվել:

Սևադան վստահ է, եթե գյուղում աշխատանք կա, քաղաք տեղափոխվելու անհրաժեշտություն չկա: Ապագա-

յի հեռանկարները լուսավոր են. հույս ունի, որ 5 տարի հետո կունենա դեղորայքի ավելի լայն տեսականի, կկարողանա մատուցել տարաբնույթ և առավել որակյալ ծառայություններ, ինչը նրան կդարձնի ամենապահանջված անասնաբույժը ոչ միայն Խնձորուքի, այլև՝ շրջակա համայնքների համար:

Թե որքանով ոգևորիչ կլինի երիտասարդ մասնագետի հաջողությունն իր հասակակիցների շրջանում, ցույց կտա ժամանակը: Համայնքի ղեկավար Ժիրայր Նազարյանը ցավով նշում է, որ թեև համայնքի բնակիչների ապրուստի հիմնական միջոցն անասնապահությունն ու հողագործությունն է, այնուամենայնիվ, գյուղատնտեսական նշանակության հողերն օգտագործվում են միայն 40 տոկոսով: Պատճառը ամենաին էլ համայնքի սահմանային դիրքը չէ, այլ սոցիալական դժվարությունները՝ մեխանիզացիայի ոչ բավարար վիճակը, գյուղմթերքի իրացման հետ կապված դժվարությունները:

Պարոն Նազարյանի խոսքով՝ մթերքի իրացման հետ կապված հիասթափությունների տարափից հետո այսօր տեղացիների շրջանում վստահության պակաս կա ցանկացած նոր նախաձեռնության նկատմամբ: Նա հիշում է, որ երբ ՌԶԳ ՀԿ-ն առաջարկեց կենդանիների փոխարինման և ցեղատեսակի բարելավման ծրագիրը, ինքը՝ որպես համայնքի ղեկավար, օրինակ ծառայեց համագյուղացիների համար: Այսօր արդեն Նազարյանների անասնագետը համարվել է արհեստական սերմնավորմամբ ծնված նոր ցեղատեսակի հորթով:

Գյուղապետի օրինակը ոգեշնչել է համայնքի բազմաթիվ բնակիչների, արդյունքում ավելացել է կենդանիների փոխանակման ծրագրին մասնակցել ցանկացողների թիվը: «Նման ծրագրերի իրականացումն անչափ կարևոր է համատարած անվտանգության պայմաններում, իսկ գյուղապետը պետք է առաջնորդ լինի ցանկացած հարցում. մարդկանց ոգեշնչելու ամենալավ օրինակը գրանցված արդյունքն է: Այսօր ես այդ արդյունքն ունեմ», - լավատեսությամբ եզրափակում է համայնքի ղեկավարը:

«Բազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ-ի «Անասնապահության զարգացում» Հայաստանի հարավում» ծրագիրը մեկնարկել է դեռևս 2014թ. սեպտեմբերին՝ Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գրասենյակի (ՇՀՀԳ) ֆինանսավորմամբ: Ծրագիրը նպատակ ունի նպաստել Սյունիքի և Վայոց ձորի մարզերում անասնապահության ոլորտում ներդրված ֆերմերների եկամուտների աճին և տնտեսական հնարավորությունների ընդլայնմանը:

«Բազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ

ԿՐԹԱԿԱՆ

ԱՄԱՌԱՅԻՆ ԴՊՐՈՑ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ. ՊԱՏՄՈՒՄ ԵՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

Ս/թ հունիսի 27-ից հուլիսի 3-ը Վրաստանի ագրարային համալսարանում (Թբիլիսի) տեղի ունեցած «Սեզոնային անվտանգության դպրոց 2016» կարճաժամկետ վերապատրաստման ծրագրին Հայաստանի ազգային ագրարային համալսարանից մասնակցում էին «Անվտանգության տնտեսություն և բնակավայրերի կանաչապարուն» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի Նունե Բաղդամյանը և նույն մասնագիտության 2-րդ կուրսի ուսանող Արգիշտի Ստեփանյանը: Ահա թե ինչ են պատմում նրանք:

Նունե Բաղդամյան. «Ամառային դպրոցը տևեց մեկ շաբաթ: Մեր ժամանան առաջին իսկ րոպեների ջերմ ընդունելությունից հասկացանք, թե մարդիկ որքան բարեհամբույր են այստեղ: Նախապես մշակված ծրագրի համաձայն՝ մենք մասնակցեցինք դասախոսությունների, լաբորատոր աշխատանքների և տարբեր էքսկուրսիաների, որոնք անցկացվում էին անտառներում: Այստեղ էլ բազմաթիվ փորձերի հետ մեկտեղ կատարեցինք անտառգնահատման աշխատանքներ, որից ունեինք տեսական բավարար գիտելիքներ, բայց չունեինք անհրաժեշտ փորձ: Փորձի պակասն էլ լրացրինք ժամանակակից սարքավորումների և գործիքների օգնությամբ: Այդ կարճ ժամանակահատվածում հասցրել են շատ բան սովորել և բավականին փորձ ձեռք բերել: Դրան նպաստեցին նաև Եվրոպայի տարբեր երկրներից՝ Լեհաստանից, Իտալիայից, Գերմանիայից ժամանած դասախոսների՝ տեղեկատվությամբ հարուստ դասախոսությունները: Օգտվելով առիթից՝ այցելեցինք նաև Թբիլիսիի տեսարժան վայրեր, ծանոթացանք պատմական հուշարձաններին և վրացական մշակույթին: Ամառային դպրոցում ձեռք բերեցի կարևոր փորձ և բազում ընկերներ»:

Արգիշտի Ստեփանյան. «Երևանից շուրջ 4 ժամվա հեռավորության վրա գտնվող և Հայաստանին սահմանակից երկրում առաջին անգամ էի լինում, սակայն այնպիսի տպավորություն էր, որ հիրավի հարազատ երկրում եմ: Հետո իհարկե հասկացա, որ այդ զգացողության միակ «մեղավորը» երկու երկրների դարավոր բարեկամությամբ էլ դեռ օգտվում ենք հին գործիքներից, քանի որ ժամանակակից սարքերի ձեռքբերումը կապված է մեծ ծախսերի հետ: Բանախոսներից մեկն էլ, խոսելով շրջակա միջավայրի վրա մարդու ունեցած ազդեցության մասին, հետաքրքիր մի միտք արտահայտեց. «Անտառագիտությունը գիտությունն է ծառերի մասին, այլ գիտություն՝ մարդու մասին»: Բացի բովանդակային և գիտական խորը դասախոսություններից՝ մենք հնարավորություն ունեցանք մեր տեսական գիտելիքները կիրառել նաև պրակտիկայում: Ամառային դպրոցը, բացի մասնագիտական գիտելիքներից, ինձ տվեց նաև շատ ընկերներ, ինչպես նաև հնարավորություն՝ ավելի մոտիկից ծանոթանալու վրացական մշակույթին: Չեմ կարող չնշել հայերիս նկատմամբ վրացիների առանձնահատուկ վերաբերմունքը, միշտ ուշադիր էին, միշտ պատրաստ օգնելու ցանկացած հարցում»:

յունն ու մշակութային սերտ կապերն են: Ամառային դպրոցի ամենաերիտասարդ մասնակիցն էի, ուստի շատ բան ունեի սովորելու այդ 1 շաբաթվա ընթացքում: Եղան հետաքրքիր դասախոսություններ, որոնցից մեկն էլ այն մասին էր, թե ինչ գործիքներ են ժամանակին օգտագործվել՝ գնահատելու անտառային ռեսուրսները և որքանով է դրանց ճշգրտության ցածր մակարդակի պատճառով տուժել գիտությունը: Ցավոք, մեր երկրում



Լուսինե Թովմասյան
Արգիշտի Ստեփանյանի դեպարտամենտ

ԴԱՍԵՆԹԱՅ

ՀԵՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՅՈՒՄԸ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԳԱՄԿ-ՈՒՄ

«Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության ծրագրի» շրջանակներում, վերջերս Գյուղատնտեսության աշխատանքային կենտրոնի կողմից կազմակերպվել էր ուսուցողական դասընթաց՝ Գեղարքունիքի ԳԱՄԿ-ի խորհրդարանների համար:



Դասընթացը վերաբերում էր ագրարային խորհրդատվությանը, տեղեկատվության և գիտելիքահենք տնտեսության կառավարմանը: Նյութերի ընտրությունը պահանջված էր մարզի գյուղացիական տնտեսություններում: «Գյուղատնտեսական կենդանիների կերակրման, պահվածքի և արհեստական սերմնավորման առանձնահատկությունները», «Նորոգման մատղաշի նպատակային աճեցումը» թեմաներով դասընթացը վարում էր գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գառնիկ Գիլոյանը: Կենսաբանական գիտությունների թեկնածու Ալֆրեդ Գրիգորյանը ներկայացրեց «Կարտոֆիլի հիվանդությունները և պայքարը դրանց դեմ» և «Հացահատիկային մշակաբույսերի հիվանդությունները» թեմաները: Կենդանիների վարակիչ, ոչ վարակիչ և առավել վտանգավոր խրոնիկ հիվանդությունների դեմ կանխարգելման ու պայքարի միջոցառումները», «Գյուղատնտեսական կենդանիների արյան մակարոնային հիվանդությունները» թեմաներով հանդես եկավ անասնաբուժական գիտությունների թեկնածու Արթուր Մկրտչյանը: Ուսուցանողները հանգամանորեն ներկայացրեցին ընտրված թեմաները, պարզաբանեցին խորհրդատուներին հետաքրքրող հարցերը: Դասընթացի աշխատանքները համակարգում էր ԳԱՄԿ-ի փոխտնօրեն Արշալույս Հայրապետյանը: Խորհրդատուներին տրամադրվեցին ԳԱՄԿ-ի կողմից պատրաստված դասընթացի թեմաների վերաբերյալ նյութեր:

Գեղարքունիքի ԳԱՄԿ

ԾՐԱԳԻՐ

ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԿ ԾՐԱԳՐԻ ՄԵԿԵԱՐԿԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Հայաստանում ՄԱԿ-ի զարգացման ծրագրի /ՄԱԶԾ/ գրասենյակն սկսում է «Հողերի և անտառների կայուն կառավարման ներդրումը հյուսիս-արևելյան Հայաստանի լանդշաֆտներում» ծրագրի իրականացումը, որը ֆինանսավորվում է Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի /ԳԷՀ/ կողմից: Ծրագրի նպատակը՝ բազմաբնույթ էկոհամակարգային ծառայությունների շարունակական հոսքն ապահովելու նպատակով, Հայաստանի հյուսիս-արևելքում հողերի ու անտառների կայուն կառավարման ներդրումն է: Ծրագրի թիրախային փարածքներն են ՀՀ Լոռու և Տավուշի մարզերը:

Օրերս Տավուշի մարզպետարանում տեղի ունեցավ ծրագրի մեկնարկային հանդիպումը, որին մասնակցում էին ՀՀ Տավուշի մարզպետարանի և անտառտնտեսությունների ներկայացուցիչներ: Հանդիպմանը «Հողերի և անտառների կայուն կառավարման ներդրումը հյուսիս-արևելյան Հայաստանի լանդշաֆտներում» ծրագրի տեխնիկական առաջադրանքի ղեկավար Հովիկ Սայաթյանը մանրամասն ներկայացրեց ծրագրի նպատակը, բաղադրիչներն ու արդյունքները: Ծրագիրը ներկայացնելուց հետո, նա պատասխանեց ներկաներին հետաքրքրող հարցերին:



tavush.mtaes.am

ՍԵՄԻՆԱՐ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ IPC ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՇԻՐԱԿԻ ԳԱՄԿ-ՈՒՄ

Վերջերս Շիրակի ԳԱՄԿ-ում գերմանական IPC խորհրդատվական ծառայության կողմից անցկացվեց սեմինար, որին մասնակցում էին ֆերմերներ, Շիրակի մարզի գյուղական համայնքների ղեկավարներ, գյուղացիական տնտեսություն վարողներ, Շիրակի ԳԱՄԿ-ի մասնագետներ և խորհրդարաններ, ԳԱՄԿ-ում արտադրական պրակտիկական անցկացնող Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ուսանողներ:



Սեմինարի մասնակիցներին ողջունեց Շիրակի ԳԱՄԿ-ի տնօրեն Զ.Ալյանյանը: Սեմինարի ընթացքում զեկուցումներով հանդես եկան ԱԹԳ հիմնադրամի տնօրեն Գագիկ Մկրտչյանը, IPC (Internationale Projekt Consult GmbH) գերմանական խորհրդատվական ծառայության գյուղատնտեսության ոլորտի ֆինանսական փորձագետ Միխայիլ Գևորգյանը, IPC ծրագրի ղեկավար Արմեն Ասատրյանը:

Զեկուցումներ ներկայացվեցին հետևյալ թեմաներով՝ Անվար ցանքի տեխնոլոգիան, առավելություններն ու նշանակությունը, Ֆինանսական գիտելիքների խորացման դասընթաց և Բիզնեսի ծրագրավորում՝ հնդկացորենի օրինակով: Դասընթացի մասնակիցներին ներկայացվեցին անվար ցանքի տեխնոլոգիան, գյուղատնտեսական վարկերի ձեռքբերման գործընթացը, բանկային համակարգը, վարկեր վերցնելու մեխանիզմները, փաստացի տոկոսադրույքի հաշվարկները, վարկային հաշվիչը: Ուսանելի էին նաև հնդկացորենի ինդուստրիան աշխարհում, հնդկացորենի գնի շարժը ՀՀ-ում 2005-2015 թթ կտրվածքում, հնդկացորենի գների դինամիկական միջազգային շուկայում, հնդկացորենը՝ որպես բիզնես և հնդկացորենի արտադրության ուսումնասիրում երկրի տնտեսության մակարդակով թեմաները:

Դասընթացի տեսական մասի ավարտից հետո, բոլոր մասնակիցներն ուղևորվեցին Շիրակի մարզի Առափի և Ողջի համայնքների փորձադաշտեր, ուր ԱԹԳ հիմնադրամի կողմից անվար ցանքի եղանակով կատարվել են ՌԴ-ից ներկրված ցորենի բարձրորակ սորտի և հնդկացորենի ցանք: Դասընթացի վերջում բոլոր մասնակիցներն իրենց գոհունակությունն հայտնեցին սեմինարի կազմակերպման և անցկացման համար:

Շիրակի ԳԱՄԿ

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Պարարտանյութերի (հանքային, օրգանական, բակտերիալ) կիրառումը հողի բերրության և մշակաբույսերի բերքավորության բարձրացման գործում կարևոր դեր ունի:

Ազոտի դերը: Մշակաբույսերի աճի ու բերքատվության առավել կարևոր տարրն է: Ազոտով, ինչպես նաև ջրով և մյուս անհրաժեշտ սննդատարրերով ապահովված բույսերն առաջացնում են խոշոր, մուգ կանաչ գույնի տերևներ, որոնք կատարում են ակտիվ ֆոտոսինթեզ, առաջացնում լավ աճ և բարձր բերք: Սակայն բույսերի համար վնասակար են ինչպես ազոտի ավելցուկը, այնպես էլ՝ պակասը: Ազոտի ավելցուկի դեպքում բույսերն առաջացնում են բուռն վերգետնյա աճ, սակայն գեներատիվ օրգաններ քիչ են գոյանում, ձգձգվում է բերքի հասունացումը, ընկնում որակը, հատկապես ավելանում է նիտրատների պարունակությունը տերևաբանջարների մոտ: Մշակաբույսերի ազոտով պարարտացման պահանջը ճիշտ որոշելու համար գոյություն ունեն տարբեր մեթոդներ: Դրանցից առավել ճշգրիտը դաշտային պարարտացման փորձն է, որը պահանջում է տևական ժամանակ (2-3 վեգետացիա): Այն ֆերմերների համար ընդունելի մեթոդ է: Մյուսը՝ հողի անալիզի մեթոդն է, երբ հողում որոշվում է մատչելի ազոտի պարունակությունը: Ըստ այդմ, 100 գ հողում, մինչև 8 մգ ազոտի պարունակության դեպքում, հողը համարվում է ազոտով թույլ ապահովված և ազոտով պարարտացման մեծ կարիք ունի, 8-12 մգ-ի դեպքում՝ միջակ ապահովված, և ունի պարարտացման միջակ պահանջ, 12 մգ-ից բարձրի դեպքում՝ հողը համարվում է ազոտով լավ ապահովված և այն ազոտով կարելի է չպարարտացնել կամ պարարտացնել ցածր չափաքանակներով: Կարևոր մեթոդ է նաև բույսի հյուսվածքներում սննդատարրերի հանքային ձևերի որոշման մեթոդը, որը հեշտ կիրառելի է և կատարման համար հմտություն չի պահանջում:

նը, որի իրացումից ավելանում է ֆերմերի շահույթը: Այն կարևոր է նաև ուշահաս տրոտերի և կարճ վեգետացիայի գոտիների համար: Ֆոսֆորով բավարար սնման դեպքում, մշակաբույսերը սնկային հիվանդություններից թույլ են վնասվում, նվազում է հացահատիկային մշակաբույսերի արմատային փտումը: Ֆոսֆորի պահանջը որոշվում է դաշտային պարարտացման փորձի, հողի քիմիական անալիզի, բույսի հյուսվածքներում հանքային ֆոսֆորի պարունակությունը գնահատելու միջոցով: Բանջարային, պտղատու մշակաբույսերն ու խաղողի վազը, ի տարբերություն հացահատիկային մշակաբույսերի, վեգետացիայի ամբողջ ընթացքում զգում են ֆոսֆորի պահանջ, ուստի, այդ մշակաբույսերի ֆոսֆորով պարարտացումը պետք է կատարել՝ հաշվի առնելով նշված հանգամանքը: Այդ նպատակով բանջարային մշակաբույսերի համար պահանջվող ֆոսֆորական պարարտանյութերի (նաև՝ օրգանական) ամբողջ քանակը հարկ է կիրառել սածիլումից առաջ, հողը նախապատրաստելիս, իսկ պտղատու և խաղողի այգիներում ամբողջությամբ գարնանը՝ միջարային տարածությունները մշակելու ժամանակ՝ ակոսային կամ բնային եղանակով, կամ մի մասը տրվում է սնուցման ձևով՝ պտուղների կազմակերպման ու բուռն աճի ընթացքում: Ֆոսֆորական պարարտանյութերի կիրառման ժամկետներն որոշելիս, պետք է նկատի ունենալ, որ դրանք հողում չեն տեղաշարժվում:

Երկաթի դերը: Երկաթը բույսերի սննդառության համար անփոխարինելի տարր է: Բավական է միայն նշել, որ բույսի տերևներում քլորոֆիլի

ֆոտոսինթեզի համար: Գոյանում են հումուսային նյութեր, և հողում հումուսի քանակն ավելանում է, ինչը նպաստում է հողի խոնավունակության, ծակոտկենության, օգտակար միկրոօրգանիզմների գործունեության բարելավմանը: Անհրաժեշտ է կիրառել միայն հասունացած գոմաղբ, որում արդեն ոչնչացել են մոլախոտերի սերմերի մեծ մասը, իսկ սննդատարրերը վերածվել են բույսերին մատչելի ձևերի: Ակնհայտ է, որ այդ պարարտանյութերի դերը մեծ է հատկապես օրգանական գյուղատնտեսություն իրականացնելիս: Գոմաղբի կիրառման չափաքանակները, կախված հողի հատկությունից, մշակաբույսից և ֆերմերի տնտեսական հնարավորությունից, կարող են տատանվել 20-60 տ/հա և ավելի:



սինթեզն ու կենսական շատ գործընթացներ կատարվում են երկաթ պարունակող ֆերմենտների մասնակցությամբ: Երբ բույսերը երկաթի բավարար քանակով են սնվել, տերևները լինում են խոշոր և մուգ կանաչ գույնի, տալիս են լավ աճ և բարձր բերք: Շատ հաճախ մշակաբույսերի երկաթով սննդառությունը խախտվում է: Զանի որ հանրապետության հողերը հիմնային են, այդ պայմաններում առաջանում են բույսերին երկաթի դժվար մատչելի միացություններ:

Հացահատիկային մշակաբույսերի համար նպատակահարմար է կիրառել 20-30 տ/հա, բանջարային մշակաբույսերի համար՝ 30-40 տ/հա, պտղատու և խաղողի այգիների համար՝ 40-60 տ/հա: Խիստ ծանր կամ նկատելի թեթև մեխանիկական կազմով հողերում և նոր մելիորացված հողերում կարելի է կիրառել գոմաղբի ավելի բարձր չափաքանակներ՝ 60-80 տ/հա: Գոմաղբի կիրառման լավագույն ժամկետը համընկնում է հողի հիմնական մշակությունը՝ աշխարհ կամ վաղ գարնանը:

Այդ երևույթը մշակաբույսերի վրա նկատվում է տերևների դեղնություն (քլորոզ), որն առաջին հերթին նկատվում է առավել երկրորդ տերևի վրա: Ընդ որում, որքան երկաթի պակասը մեծանում է, այնքան ուժեղանում է բույսի սաղարթի դեղնությունը: Երկաթի պակասից առաջացող քլորոզը հատկապես նկատվում է պտղատու և խաղողի այգիներում: Բազմամյա տնկարկներում, քլորոզի պարբերաբար կրկնման դեպքում, բույսի աճն ու բերքատվությունն էապես նվազում են, կարող է սաղարթը հետագայում չորանալ, իսկ այգու մշակությունը դառնալ ոչ արդյունավետ:

Կենսահումուսը և թռչնաղբը սննդատարրերով ավելի հարուստ են և կիրառվում են առավել պակաս չափաքանակներով՝ 1-10 տ/հա և ավելի: Կենսահումուսը կիրառելի է ցանքից (տնկումից) առաջ և ցանքից հետո, նաև սնուցման ձևով, իսկ թռչնաղբը՝ ցանքից առաջ և սնուցման ձևով: Տորֆը, կենսահումուսն և հատուկ գոմաղբը մեծ կիրառություն ունեն նաև ջերմոցներում և ջերմատներում՝ հողախառնուրդ պատրաստելու համար:

Ֆոսֆորի դերը: Առանց ֆոսֆորի որևէ բուսական կամ կենդանական օրգանիզմ գոյություն ունենալ չի կարող: Այն մտնում է բույսի կյանքի համար անփոխարինելի այնպիսի նյութերի բաղադրության մեջ, որոնք մասնակցում են սպիտակուցների սինթեզին, բույսերի աճին, բազմացմանը, ժամանակակից հատկությունների փոխանցմանը, մարդկանց և կենդանիների նյարդային համակարգի բնականոն գործունեությանը: Ֆոսֆորով ապահովված բույսերը լավ են աճում, ավելանում է արմատների կլանող հատկությունները, շուրջ 30 %-ով նվազում է միավոր բերքի ստացման համար ծախսված ջրի քանակը, որը կարևոր է հանրապետության անջրդի/չորային/ երկրագործության համար: Այս առումով, ֆոսֆորի պահանջը մեծ է այն մշակաբույսերի մոտ, որոնք բերքում կուտակված են շաքարներ (խաղողի վազ, պտղատու ծառեր, բանջարային մշակաբույսեր, ծխախոտ, հացահատիկ): Ֆոսֆորը նպաստում է վաղ բերքի ստացման

Կալիումի դերը: Այն նպաստում է ֆոտոսինթեզի արդյունավետության բարձրացմանը, ածխաջրերի սինթեզին, փոխակերպմանն ու տեղաշարժմանը տերևներից բերքի մեջ կամ պահեստային օրգաններ: Կալիումը նպաստում է սպիտակուցների սինթեզին, խթանում մերիտեմային բջիջների աճին, կարգավորում ջրային ռեժիմը, բույսերը դիմանում են ժամանակավոր չորությանը: Կալիումի դերը հատկապես մեծ է աշխանացան հացաբույսերի ձմեռադիմացկանության բարձրացման գործում, խիստ կարևոր է խաղողի վազի և բազմամյա տնկարկների միամյա շիվերի փայտացման համար: Կալիումի պակասից տերևները կնճռոտվում են, նվազում է դիմացկունությունը սնկային հիվանդությունների և ցրտերի նկատմամբ: Ինչպես այլ սննդատարրերի դեպքում, մշակաբույսերում կալիումի պահանջը ևս որոշվում է դաշտային պարարտացման փորձի, հողի կամ բույսի քիմիական անալիզով:

Գիտնականների կողմից առաջարկվել են երկաթի համալիր միացություններ, այդ թվում՝ դիէթիլեն եռամին հինգքաղախաթթվի երկաթի համալիրը, կոմպլեքսոնը և այլն:

Նշված միացությունները կիրառվում են հող մոցնելով և արտաարմատային սնուցմամբ՝ 0.2-0.3 % ջրային լուծույթով: Պարարտանյութերի արդյունավետությունը բարձրացնելու համար, ցանկալի է դրանք կիրառել, քանի դեռ դեղնության նշաններ չեն երևացել կամ՝ նոր են սկսում երևալ: Խորհուրդ է տրվում արտաարմատային սնուցումը կատարել օրվա զով ժամերին՝ առանձին կամ համատեղելով բուժանյութերի կամ հերբիցիդների կիրառման հետ:

Օրգանական պարարտանյութերի դերը:

Օրգանական պարարտանյութերը (գոմաղբ, թռչնաղբ, կենսահումուս, տորֆ, կոմպոստ) պարունակում են բույսերին անհրաժեշտ բազմաթիվ սննդատարրեր: Դրանց կենսաբանական քայքայումից անջատվում է ածխաթթու գազ, որն անհրաժեշտ է

Բակտերիական պարարտանյութերի դերը:

Այս պարարտանյութերի կիրառման նպատակն է՝ հողը հարստացնել այնպիսի բակտերիաներով, որոնք նպաստավոր պայմաններում, մշակաբույսերի արմատային համակարգի շրջակայքում բազմանում են և իրենց գործունեությամբ օդի մոլեկուլային ազոտի հաշվին, հողը հարստացնում կենսաբանական ազոտով, ինչը հատկապես կարևորվում է օրգանական գյուղատնտեսության ժամանակ: Դրանք կիրառվում են սերմերը պարարտանյութի լուծույթով թրջելով ջրման հետ կամ արտաարմատային սնուցմամբ:

Կարևոր է իմանալ, որ բակտերիական պարարտանյութերը, վեգետացիայի ընթացքում, 25-30 օրը մեկ կիրառելու դեպքում, հնարավոր է կանխել սնկային հիվանդությունների զարգացումը:

Սերգեյ Երիցյան
ՀԱԱՀ, գյուղատնտեսական գիտությունների թեկնածու

ՀԵՏԱԲԵՐՔԻՐ Է...

Սուրճի դերը մարդկության կյանքում

Սուրճը ընկեր է, որը պարարավում է սրճենու բույսը սերմերից: Շնորհիվ սուրճի բաղադրության մեջ գտնվող կոֆեինի և սուրճի ունի օրգանիզմը խթանող ազդեցություն: Կա հայտնի պատմություն այն մասին, որ սուրճի ծառի հրաշալի հատկությունների առաջին բացահայտողը եղել է Քալդի անունով եթովպացի հովիվը, մոտավորապես 850 թվականին: Լեռների լանջերին իր հոտն արածեցնելու ժամանակ հովիվն ուշադրություն է դարձրել այժերի գարնանային պահվածքի վրա: Այդ բույսի տերևներն ուտելով՝ նրանք սկսում էին վազվզել այս ու այն կողմ և ցատկոտել:



Քալդիի պատմածը լսելով՝ մոտակա վանքի վերակացուն ինքը նույնպես փորձում է տերևները՝ զգալով դրանց առույգացնող հատկությունը: Սուրճի տերևներից և պտուղներից պատրաստված թուրմի օգտագործումը դառնում է վանքի ավանդույթը և շուտով սիրելի է դառնում նաև շրջակա գյուղերի բնակիչների համար: Եթովպիայում տարածվելուց հետո, ընկերված ճանաչվում է Եմենում, իսկ հետագայում՝ նաև ամբողջ աշխարհում: Գոյություն ունի սրճենու մոտ 40 տեսակ, բայց մեր օրերում օգտագործվում է այդ բուսաբանական տիպերից ընդամենը 4-ի բերքը: Արաբիկային (Coffea Arabica) բաժին է ընկնում սուրճի համաշխարհային արտադրանքի 70 %-ը, Ռոբուստային՝ (Coffea Canephora) մոտ 30 %-ը: Մյուս երկուսը՝ Coffea Liberica և Coffea Excelsa-ն, հազվադեպ են օգտագործվում սուրճի արտադրության մեջ: Մինչև 70-ականները Եվրոպա ներմուծվում էր հիմնականում Ռոբուստա տեսակի սուրճ, այն ժամանակ էսպրեսոն պատրաստում էին միայն դրանից, բայց այսօր Արաբիկան անհամեմատ ավելի հարգի է: Աշխարհում առկա էլիտա սուրճերի 99 տոկոսը ստացվում է Արաբիկայից:

Կան բազմաթիվ հետաքրքիր փաստեր սուրճի մասին

1771 թ. Պրուսիայի թագավոր Ֆրիդրիխ Մեծը հրովարտակ արձակեց, որով արգելում էր հասարակ մարդկանց սուրճ ըմպել: Այս հրամանի անսխալ կատարումը վերահսկելու համար, կային նույնիսկ հատուկ պաշտոնյաներ՝ kaffee schnufflers՝ սուրճի լրտեսներ: Իսկ Տալլինում մինչ օրս կանգուն է մի հինավուրց աշտարակ, որի անունն է Կիկին-դե-Կեկ, որը թարգմանաբար նշանակում է «նայիր խոհանոցին»: Այն մոտ 500 տարեկան է, հնում այդտեղից հաճախ հայտնաբերում էին այն տները, որտեղ սուրճ էր պատրաստվում և պատրաստողներին ենթարկում տուգանքի: Այժմ սուրճի արտադրության 40 %-ը կատարվում է Բրազիլիայում:

Սրճամուխների 70 %-ը խմում է «Արաբիկա» տեսակի սուրճ, իսկ 30 %-ը՝ «Ռոբուստա», որն ավելի ցածր կարգի է, բայց ավելի դիմացկուն է հիվանդությունների նկատմամբ, նրանից 2 անգամ ավելի շատ բերք կարելի է ստանալ, քան «Արաբիկայից»: «Արաբիկա»-ն իր մեջ պարունակում է 1 % կոֆեին, իսկ «Ռոբուստա»-ն՝ 2 %: Լուծվող սուրճ արտադրողները հիմնականում այս երկու տեսակի սուրճերը խառնում են իրար: Սուրճի ամենամեծ սիրահարներն ապրում են ԱՄՆ-ում: Աշխարհում ամենաշատ վաճառվող ապրանքների մեջ սուրճը զբաղեցնում է երկրորդ հորզոնականը: Առանց շաքարավազի, սև սուրճի կալորիականությունը հավասար է 0-ի: Սուրճի ակնթաթային ազդեցությունը միջ է իրականում սուրճն ազդում է խնդրուց 30 րոպե անց, իսկ ազդեցությունը մնում է 2-6 ժամ: Իտալիայում այն համարվում է բույրի աղբյուր, իսկ Հունաստանում առանց սեր սուրճ մատուցելը՝ վիրավորանք: Այսօր սուրճի սերն ընդգծելու համար ընդունված է այն մատուցել սպիտակ բաժակներով:

Այս ընկերվածքի համար ամբողջ աշխարհում կիրառում են coffee անվանումը: Իսկ վերաբերում է հայերիս, ապա մենք աշխարհում, թերևս միակ ազգն ենք, որ այն անվանում ենք ոչ թե coffee-ի որևէ հնչյունափոխված տարբերակով, այլ դրա համար օգտագործում ենք «սուրճ» բառը: Ասում են՝ այս բառն իտալական փոխառություն է մեր լեզվում, չնայած կան նաև պնդումներ՝ իբրև ընկերվածքի անվանման հայկական տարբերակը սերտորեն կապված է նրա հետ, թե ինչպես էին հայերը ըմպում այն. սուրճը շուրթերով կլանելիս՝ կարելի է լսել «ս»-հնչյունը, որը փոխակերպվում է «չ»-չափոցի: Ամեն դեպքում տրամաբանական է:

Լիլիթ Գասպարյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Գյուղատնտեսական ոլորտի փորձագուցադրական աշխատանքներում ներգրավման

«Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» (CARD) հիմնադրամը, ADA AHM 8277-00/2015 «Կենդանիների առողջության կառավարում» ծրագրի շրջանակներում, հրավիրում է ՀՀ մարզերում գործող Գյուղատնտեսական և անասնաբուժական սպասարկման կենտրոններին (ԳԱՍԿ) և կենտրոնների հետ համագործակցող՝ անասնաբուժությամբ զբաղվող տնտեսվարողներին՝ մասնակցելու ծրագրով նախատեսված փորձագուցադրական աշխատանքներին՝ ըստ հետևյալ ոլորտների.

1. Գյուղատնտեսական կենդանիների կերակրում
2. Գյուղատնտեսական կենդանիների պահվածք և խնամք
3. Կերային մշակաբույսերի նոր տեսակների տեղայնացում և փորձարկում
4. Գյուղատնտեսական կենդանիների գենետիկական հատկանիշների բարելավում
5. Մասնավոր անասնաբուժության նոր մեթոդների կիրառում և նոր դեղամիջոցների փորձարկում:

Առաջարկությունները և հայտերը կարող եք ներկայացնել հիմնադրամի անասնաբուժության և անասնաբուժության բաժնին հետևյալ հասցեով՝ ՀՀ ք. Երևան, Ազատության 1/21-40 կամ էլեկտրոնային փոստի հասցեով՝ card@card.am, հեռախոս՝ 060-440-550:

Հայտին կից պետք է ներկայացվի Գյուղատնտեսական ու անասնաբուժական սպասարկման կենտրոնի գրավոր կարծիքը:

Հայտերն ընդունվում են 2016թ.-ի հուլիսի 18-ից, վերջնաժամկետը՝ հոկտեմբերի 18-ը:

ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ

Հայաստանում և Վրաստանում կենդանիների առողջության կառավարման ծրագրի երկրորդ փուլի ելակետային տվյալների հավաքագրում և արդյունքների միջանկյալ գնահատում 25-ը հուլիսի, 2016 թ.

1. «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» (CARD) հիմնադրամը, Ավստրիայի զարգացման գործակալության (ADC) կողմից ֆինանսավորվող «Հայաստանում և Վրաստանում կենդանիների առողջության կառավարում» ծրագրի երկրորդ փուլի իրականացման շրջանակներում, հայտարարում է մրցույթ՝ Հայաստանում և Վրաստանի Նինցմիդա, Դմանիսի և Աջարիա տարածաշրջաններում ծրագրի իրականացման ելակետային տվյալների հավաքագրման և արդյունքների միջանկյալ գնահատման համար:

2. Մրցույթին կարող են մասնակցել միայն այն կազմակերպությունները, որոնք ունեն նմանատիպ վերլուծությունների իրականացման առնվազն երկու տարվա փորձ:

3. Մրցույթային փաթեթները կարելի է ձեռք բերել CARD-ի ներկայիս գրասենյակից՝ մինչև 2016թ.-ի հուլիսի 28-ը, ժամը 16:00-ը՝ հետևյալ հասցեով՝ ՀՀ, ք. Երևան, Ազատության 1/21-40, հեռ.՝ 374 60 440 550:

4. Շահագրգիռ կազմակերպությունները մրցույթային փաթեթները ստանալու համար պետք է ներկայացնեն կազմակերպության պետեգիստրում գրանցման վկայականի պատճեն և հետաքրքրվածության նամակ:

5. Հայտերը պետք է ուժի մեջ մնան բացման օրվանից՝ 10 օրվա ընթացքում և ներկայացվեն կնքված փակ ծրարների մեջ՝ մինչև 2016թ.-ի օգոստոսի 3-ը, ժամը 17:00-ը, հետևյալ հասցեով՝ ՀՀ, ք. Երևան, Ազատության 1/21-40, հեռ.՝ 374 60 440 550: Կոնտակտային անձ՝ Սոնա Թելունց:

6. Նշված ժամկետից հետո ստացված հայտերը չեն մասնակցելու հայտերի բացմանը, որը տեղի կունենա 2016թ. օգոստոսի 4-ին, ժամը 16:00-ին, «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» (CARD) հիմնադրամի գրասենյակում՝ մասնակցելու ցանկություն հայտնած հայտատուների ներկայությամբ:

Հարգելի քաղաքացիներ,

Տեղեկացնում ենք, որ Գյուղատնտեսական հանրագիտարան ձեռք բերելու համար կարող եք գանգահարել 011 52 48 34 հեռախոսահամարով:



Հանրագիտարաններն առկա են նաև Գյուղատնտեսության ազակցության մարզային կենտրոններում, ինչպես նաև՝ «Նոյան Տապան» և «Բուկինիստ» գրատներում:

ԱՎՏՈՐՈՒՄՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ «Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ը վաճառում է Կուբան և ՊԱՉ-672 մակնիշի ավտոբուսներ:

Մակնիշը	Թողարկման տարեթիվը	Գրանցման համարանիշը	Տեխ անձնագիր
Կուբան	1984	հանձնված	BP372608
ՊԱՉ-672	1981	560 UL 12	BJ1652457

Գինը պայմանագրային: Մանրամասն տեղեկությունների համար գանգահարել 091-99-55-81

ՇԱՐՈՒՆԱՎՈՒՄ Է 2016 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

«ԱԳՐՈՒՐԱՏՈՒ» թերթ 1 համարի գինը՝ 120 դրամ 6 ամսվանը՝ 1980 դրամ 1 տարվանը՝ 3960 դրամ «ԱԳՐՈՒԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ամսագիր 1 համարի գինը՝ 1350 դրամ 6 ամսվանը՝ 4050 դրամ 1 տարվանը՝ 8100 դրամ

Բաժանորդագրությունը իրականացնում են՝ Գյուղատնտեսության աջակցության հանրապետական և մարզային կենտրոնները «Շայփոստ», «Շայմամուլ», «Պրես-Ատտաշե» կազմակերպությունները

Տպաքանակ՝ 1100 2 տպագրական մամուլ գրանցման թիվ՝ 01 ՄՕ00226 դասիչ՝ 69105 պատվեր թիվ՝ 55 ստորագրված է տպագրության 25.07.2016 թ. տպագրվում է ԳԱՀԿ տպարանում, Երևան, Մամիկոնյանց 39ա